Արձանագրություն N 5

Գենդերային բռնության դեմ պայքարի միջգերատեսչական հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 2-ի, ժամը 16:00-ի նիստի

Օրակարգ

1. <<Ընդդեմ գենդերային բռնության 2012 թվականի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին>> Հայաստանի Հանրապետության Կառավարության արձանագրային որոշման նախագծի ներկայացում
2. <<Առաջարկություն ՀՀ-ում գենդերային բռնությունից տուժածների համար ուղղորդման մեխանիզմի ստեղծման վերաբերյալ>> գրքույկի/վերլուծության ներկայացում
3. Ելույթներ, մտքերի փոխանակում <<Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ>> ամենամյա հանրապետական քարոզարշավի անցկացման մասին:

Մասնակցեցին

Ֆ. Բերիկյան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)

Ն. Արզունյան ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության ՊԱՀԿ և քրեակատարողական համակարգի օրենսդրական ապահովման բաժնի պետ

Տ. Խաչիկյան ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տարածքային կառավարման զարգացման վարչության վերահսկողության բաժնի աշխատակից

Գ. Ավագյան ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության մոր և մանկան առողջության պահպանման բաժնի գլխավոր մասնագետ

Ա.Ղազարյան ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի ներկայացուցչի տեղակալի պաշտոնակատար (համաձայնությամբ)

Ջ. Սագրիզովա ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի <Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում> ծրագրի ղեկավար (համաձայնությամբ)

Ծ. Հարությունյան ԵԱՀԿ Երևանի գրասենյակի ժողովրդավարության զարգացման ծրագրի ավագ օգնական (համաձայնությամբ)

Գ.Արմաղանովա <Հայաստանի համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա> հասարակական կազմակերպության փոխնախագահ (համաձայնությամբ)

Լ. Ահարոնյան <Կանանց ռեսուրսային կենտրոն> հասարակական կազմակերպության համանախագահ (համաձայնությամբ)

Դ. Սարգսյան <Կանանց իրավունքների կենտրոն> հասարակական կազմակերպության ներկայացուցիչ (համաձայնությամբ)
Ա. Թանաշյան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ, կանանց հիմնահարցերի բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)

Հանձնաժողովի նիստը բացեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ **Ֆ. Բերիկյանը** և մինչ օրակարգի հարցերին անցնելը, անդրադարձավ Հայաստանի Հանրապետությունում 2011թ. նոյեմբերի 25-ին մեկնարկած <Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության> 16-օրյակի շրջանակներում իրականացվող միջոցառումներին: Նա նշեց, որ հանձնաժողովի այս նիստը ևս նվիրված է քարոզարշավին: Այնուհետև հանձնաժողովի անդամներին ներկայացրեց նիստի օրակարգը, որից հետո խոսքը փոխանցեց ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետի տեղակալ **Ա.Թանաշյանին** ներկայացնելու համար օրակարգի 1-ին հարցը:

Ա. Թանաշյանը նախ ներկայացրեց 2011թ. <Ընդդեմ գենդերային բռնության> ծրագրով իրականացված միջոցառումները, նշելով առավել նշանակալի աշխատանքները, մասնավորապես, որ

- մշակվել է քաղծառայողների վերապատրաստման դասընթացների գենդերային բռնության ուսումնական մոդուլ, որը ներառվել է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2008թ. հուլիսի 8-ի N 567-Ա որոշմամբ հաստատված <Գենդերային հիմնահարցեր> թեմայով քաղաքացիական ծառայողների (բարձրագույն, գլխավոր, առաջատար, կրտսեր պաշտոնների համար) վերապատրաստման դասընթացներում և ըստ այդ մոդուլի 2011թ. իրականացվել են վերապատրասումներ,
- ՀՀ մարզպետարաններում և Երևանի քաղաքապետարանում ստեղծվել են գենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովները և ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ կազմակերպվել է այդ հանձնաժողովների հետ հանդիպումներ, տրամադրվել է մեթոդական աջակցություն և համապատասխան տեղեկատվական նյութեր:

Նա անդրադարձավ նաև <<Ընտանեկան բռնության մասին>> ՀՀ օրենքի նախագծի լրամշակման աշխատանքներին, տեղեկացնելով, որ կոնվենցիայի թարգմանությունը առաջիկայում կավարտվի և կներկայացվի աշխատանքային խմբին: Այնուհետև Ա. Թանաշյանը ներկայացրեց <<Ընդդեմ գենդերային բռնության 2012 թվականի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին>> Հայաստանի Հանրապետության Կառավարության արձանագրային որոշման նախագիծը և ծրագրում ներառված միջոցառումները: Նա նշեց, որ

հանձնաժողովի անդամները կարող են ներկայացվել իրենց առաջարկները նախագծի կապակցությամբ, որից հետո այն սահմանված կարգով կներկայացի ՀՀ Կառավարություն:

Հանձնաժողովի անդամների կողմից օրակարգի առաջին հարցի վերաբերյալ եղան լրացումներ և հարցեր մասնավորապես,

ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության մոր և մանկան առողջության պահպանման բաժնի գլխավոր մասնագետ **Գ.Ավագյանը** ներկայացրեց առողջապահության նախարարության կողմից իրականացված միջոցառումները:

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի համակարգի իրավական ապահովման վարչության ՊԱՀԿ և քրեակատարողական համակարգի օրենսդրական ապահովման բաժնի պետ **Ն.Արզունյանն** անհանգստություն հայտնեց կապված <<Ընտանեկան բռնության մասին>> օրենքի նախագծի հանրապետությունում տեղայնացնելու հետ: Ա. Թանաշյանը պատասխանեց, որ, բացի նախագծի լրամշակումից, նախատեսվում է նաև հանրային լսումների անցկացում, որը կհեշտացնի այդ գործընթացը:

Ֆ.Բերիկյանը օրակարգի 2-րդ հարցը ներկայացնելու համար խոսքը տվեց ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի <Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում> ծրագրի ղեկավար **Ջ. Սարգիզովային**: Նա ներկայացրեց <<Առաջարկություն ՀՀ-ում գենդերային բռնությունից տուժածների համար ուղղորդման մեխանիզմի ստեղծման վերաբերյալ>> գրքույկը, որը մշակվել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի աջակցությամբ: Նա անդրադարձավ ուղղորդման ազգային մեխանիզմի հիմնարար սկզբունքներին, գենդերային բռնության դեմ պայքարի միջոցառումների ինտեգրման մոդելին, ուղղորդման մեխանիզմի ներդրման անհրաժեշտությանը և դրա հետ կապված հնարավոր ռիսկերին:

Ֆ.Բերիկյանը գնահատեց կատարված աշխատանը և նշեց դրա ներդրման կարևորությունը:

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ հանձնաժողովի անդամների կողմից եղան մի շարք ելույթներ և հայտարարություններ: Նրանք ներկայացրեցին 16-օրյակի շրջանակներում իրենց կազմակերպությունների կողմից իրականացված կամ իրականացվելիք միջոցառումները և հրավիրեցին ակտիվ մասնակցության.

<<Կանանց իրավունքների կենտրոն>> ՀԿ-ի ներկայացուցիչ Դ. Սարգսյանը նշեց, որ 16-օրյակի շրջանակներում կազմակերպվել են մի շարք միջոցառումներ ու ակցիաներ ընդդեմ ընտանեկան բռնության՝ ֆիլմերի ցուցադրում, ցուցահանդես-մրցույթ և այլն:

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի <Ընդդեմ գենդերային բռնության Հարավային Կովկասում> ծրագրի ղեկավար Ջ. Սարգիզովան նշեց, որ ՄԱԿ-ը յուրաքանչյուր տարի մշակում է 16-օրյակի միջոցառումների օրացույց, որը տեղադրված է http://www.genderbasedviolence.am ինտերնետային կայքէջում:

ԵԱՀԿ-ի երևանյան գրասենյակի ժողովրդավարության զարգացման ծրագրի ավագ օգնական Ծ. Հարությունյանը նշեց, որ դեկտեմբերի 2-ին կազմակերպվել է կլոր սեղան <<Կինը և քաղաքականությունը>> թեմայով, որտեղ քննարկելվել են նշված հիմնահարցերը:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Իգիտություն ընդունել Ա.Թանաշյանի և Ջ. Սարգիզովայի հաղորդումները 2011թ. կատարված աշխատանքների, <<Ընդդեմ գենդերային բռնության 2012 թվականի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին>> Հայաստանի Հանրապետության Կառավարության արձանագրային որոշման նախագծի և <<Առաջարկություն ՀՀ-ում գենդերային բռնությունից տուժածների համար ուղղորդման մեխանիզմի ստեղծման վերաբերյալ>> գրքույկի վերաբերյալ:
2. Հանձնարարել՝ հանձնաժողովի անդամներին մինչև 2011թ. դեկտեմբերի 10-ը ներկայացնել առաջարկություններ նախագծի վերաբերյալ:

Հանձնաժողովի նախագահ՝ **Ֆ. Բերիկյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Ա.Թանաշյան**

/05.12.2011թ./